

Կողոսացիս 1:17,18 (Colossians 1:17,18)

«Յիսուս Առաջին Տեղը Դնենք»

Վեր. Ստեփան Մնջերեան

Հայ Աւետարանական Գողգոթա Եկեղեցի 02.21.99

Պիտի կարդանք Կողոսացիս 1:17Էն-18երորդ համարները: *Անհկա - այսինքն Յիսուս - ամէն բանէ առաջ էր եւ ամէն բան անով հաստատ կը կենայ եւ անհկա է մարմնին, այսինքն եկեղեցիին գլուխը որ սկիզբն է, մեռելներէն անդրանիկը, որպէս զի ինք ըլլայ ամէն բանի մէջ նախապատիւ:*

Լսած եմ ինչպէս կը պատրաստեն նապաստակի ապուրը: Այսպէս կը սկսի «Նախ, նապաստակը բռնէ՛:» Մենք ալ պէտք է թուէնք մեր նապատակները առաջին դնելով էն կարելորդ եւ մնացեալը կը հետեւի:

Յիսուսը կը մնայ միշտ նախապատիւ: Ան արժանի է պատիւի, յարգանքի եւ փառքի: Ան ամէն բանի մէջ առաջինն է: Մեր կեանքներուն մէջ առաջինն է, նաեւ իր եկեղեցիին մէջ:

Մենք կը պայքարինք եւ ուրիշ անկարելորդ բաներ կը խնդենք մեր կեանքը: Ray Krockը որ McDonald՝sը հիմնեց ըսած է, «*ես Աստուծոյ կը հաւատամ, վերջը իմ ընտանիքիս եւ վերջը McDonald՝sի կը հաւատամ:*» Եւ կը շարունակէ, «*երբ գրասենեակս երթամ, հակառակը կը մտածեմ:*» Այսինքն McDonald՝sը կըլլայ առաջինը:

Փորձութիւն է ուրիշ բաներու աւելի կարելորդութիւն տալ քան Յիսուսի: Բայց Յիսուսը պէտք է ըլլայ նախապատիւ մեր կեանքին մէջ: Ան մեր բոլոր պետքերը կը հոգայ:

1994ին, Քարենը եւ ես զգացինք Northridgeի երկրաշարժը: Շատ լաւ կը յիշեմ ինչպէս ամէն բան ինկաւ եւ կոտրեցաւ - բոլոր տունը կը շարժէր - մութին մէջ մնացած կը խորհէինք թէ բոլոր տունը պիտի փլի՞: Ամիսներ վերջ երբ դուռ մը գորաւոր կը գոցուէր կը սարսափէի:

Վերջերս մեր Garage-ին մեջ պահարաններ կը շինեմ ապրանքներու համար: Լաւ մը պատին կամրացնեմ որպէսզի երկրաշարժի ատեն հաստատ մնան: Շատեր կըսեն ես չափը կանցնեմ: Բայց Northridge-ի երկրաշարժը ինձի պատրաստ ըլլալ սորվեցուց - ուրեմն լաւ է պատրաստ ըլլալ պատուհասէ առաջ:

Կեանքը առիթ չի տար պատրաստուելու: Ես երբ իմ կեանքիս մէջ առաջին տեղը կուտամ Յիսուսի այն ատեն վստահ կ'ըլլամ որ հիմը ունիմ տոկալու կեանքի դառն պարագաներուն: Ամէն բանի մէջ զիս կառաջնորդէ եւ կ'ուղղէ:

Պողոս Առաքեալ Եփեսացիս առաջին գլխուն մէջ մեզի կը ցուցնէ ինչպէս կրնանք Յիսուս ընել մեր կեանքին նախապատիւ:

3րդ համար - Աստուած կ'օրհնէ մեզ հեգելոր օրհնութիւններով:

6րդ համար - Կրնանք գովել Յիսուս մեր փրկութեան համար:

7րդ համար - Փրկութիւն ունինք Իր արիւնով, մեղքի թողութիւն Իր շնորհով:

8րդ համար - Մեր վրայ կ'աւելցնէ իմաստութիւն եւ գիտութիւն:

14րդ համար - Որ մեզ ժառանգորդ ըրած է:

17րդ համար - Մեր կեանքերը կը խորանան Յիսուսով եւ անով կ'անհնգ:

19րդ համար - Մենք հաղորդ կ'ըլլանք Իր ոյժին եւ զօրութեան:

Ասոնք սքանչելի խոստումներ են եւ կը քաջալերեն մեզ որ Յիսուս առաջին տեղը դնենք մեր կեանքին մէջ:

Ինչ կը նշանակէ Յիսուս առաջին տեղը դնել: Յանկ մը շինել եւ Յիսուսի անունը վերը դնել - կը բաւէ:

Պողոս կ'ըսէ Յիսուս առաջին տեղը դնենք ամէն պարագայի մէջ: Թող Յիսուս ըլլայ նախապատիւ մեր կեանքի ամէն մարգերուն մէջ: